

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ “ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ” ԹԵՄԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

17.02.2014

Գեղարքունիքի մարզպետարանում անցկացվեց հանդիպում-քննարկում ‘Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով’ LIFE ծրագրի շրջանակներում: Մասնակցում էին գործատուներ, ներկայացուցիչներ Գեղարքունիքի մարզպետարանից, մարզի հասարակական կազմակերպություններից, մարզի տարածքային սոցիալական ծառայություններից: Քննարկումը վարեց Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Հակոբյանը: Գեղարքունիքի մարզում գրանցված հաշմանդամներից 82-ը համագործակցում են LIFE ծրագրի հետ, ինչի շնորհիվ լուծվել է մարզի հաշմանդամություն ունեցող 25 անձանց զբաղվածության խնդիրը, իր հաշվետվության ընթացքում նշեց ‘Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով’ LIFE ծրագրի տնօրեն, ‘Սեյվ Դը Չիլդրեն’ միջազգային կազմակերպության ներկայացուցիչ Ջինա Սարգիզովան: Ըստ ծրագրի տնօրենի՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության եւ ‘Սեյվ Դը Չիլդրեն’ միջազգային կազմակերպության աջակցությամբ մարզում մեկնարկել է երեք ծրագրի նախապատրաստական փուլը, որի շրջանակներում Սեւան քաղաքում ստեղծվելու է հրուշակեղենի արտադրամաս, Մարտունիում հիմնվելու է տպարան եւ կարի արտադրամաս, իսկ Ճամբարակում բացվելու է ‘LIFE’ սրճարան, որտեղ իրենց զբաղվածությունը կգտնեն ևս 30 հաշմանդամներ: Ծրագիր ունի ութամսյա տեւողություն: Իսկ ութ ամսից հետո երեք տարի անընդմեջ հաշմանդամները պարտադիր կերպով աշխատանք են ունենալու: Այն իրականացվում է բիզնես-գործատուների եւ հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Հանդիպման ընթացքում ‘Զբաղվածության պետական ծառայություն ’ գործակալության Վարդենիսի տարածքային կենտրոնի կատարած աշխատանքների հաշվետվությամբ հանդես եկավ տարածքային կենտրոնի տնօրեն Արամ Հարությունյանը: Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հեռանկարների շուրջ քննարկում ծավալվեց նաեւ մարզի գործատուների հետ: